ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 14.02.2018թ. ԹԻՎ 102-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հայաէրոնավիգացիա ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

06 մարտի 2018
ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ
Խ. Սիսակյան ՏՏԾ պետ
Հանձնաժողովի բացող անդամներ
Վ. Ալթունյան ԱԱՏ Կենտրոնի ինժեներ
Հ. Նիկողոսյան ԱԱՏ կենտրոնի ղեկավար
Հանձնաժողովի գնահատող անդամներ
Հ. Մինասյան ՏՏԱ կենտրոնի ղեկավար
Հ. Սահակյան ՀԿ ղեկավար
Հանձնաժողովի քարտուղար
Ա. Կարապետյան քարտուղար

ՕՐԱԿԱՐԳ

1. <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-08/18>> ծածկագրով հայտերի բացում և գնահատում՝ հրավերով սահմանված կարգով:
2.Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում :

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը և հասցեն՝

1. <<Արվատեկ>> ՍՊԸ (հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 37/5),
2. <<Սմարթլայն>> ՍՊԸ (հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 110),

Հանձնաժողովը արձանագրեց, որ <<Սմարթլայն>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտում առկա են սույն ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերով նախատեսված պայմաններին:
<<Արվատեկ>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտում հայտի ապահովման գումարի չափը չէր համապատասխանում սույն ընթացակարգի հրավերի 7.1 կետով սահմանված պայմաններին (Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին): Հայտի ապահովման գումարը պակաս էր հայտով ներկայացված գնի 5 տոկոսից: Հանձնաժողովը արձանագրեց, որ համաձայն սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետի՝ Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են **անբավարար և մերժվում են**: Ընդ որում հայտերի բացման նիստում

հանձնաժողովը **մերժում է** այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին **անհամապատասխան**

Հանձնաժողովի նախագահ Խ.Սիսակյանը հայտարարեց սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

Հրապարակվեց մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները:

ՀՀ դրամ

Չափ. հ/հ	Անվանում	<<Սմարթլայն>> ՍՊԸ	<<Արվատեկ>> ՍՊԸ	Նախահ. Գին
1	Գրատախտակների մաքրման հավաքածուներ կամ պարագաներ	4050	5700	5700
2	Դակիչ, քանոնով	3000	4800	6990
3	Ծրար մեծ A4, ձևաչափի համար	30000	36400	50000
4	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	35000	40600	50000
5	Մարկերներ	4185	3348	6200
6	Ծրար	16000	20800	20000
7	Էջաբաժանիչ, թղթե			6000
8	Պոլիմերայինինքնակպչուն ժապավեն՝ 19մմx36մմ, գրասենյակային, փոքր		880	1650
9	Գրատախտակ	6000	19000	10000
10	Թուղթ տպիչների համար			5000
11	Կարիչի մետաղալարե կապեր	770	1760	1100
12	Շտրիխներ	3200	3900	5800
13	Մատիտ՝ գրաֆիտե միջուկով, հասարակ	4000	5600	10000
14	Մարկերներ	4340	9300	7440
15	Մարկերներ	6815	6580	13630
16	Նամակի ծրար	18000	28000	40000
17	Գնդիկավոր գրիչ	32500	29000	45000
18	Գրենական պիտույքների դասավորման հարմարանքներ և պարագաներ	17000	18000	10000
19	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն՝ 48մմx100մմ, մեծ	7150	6500	5200
20	Կոճգամ, պլաստմասե գլխիկով	570	900	360
21	Կարիչ, 20-50 թերթիհամար	17600	17050	13750

<<Արվատեկ>> ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չի հանդիսանում:

18, 19, 20, 21 չափաբաժիններով առաջարկված <<Սմարթլայն>> ՍՊԸ կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում էր նախահաշվային գները:

Հանձնաժողովը որոշեց

1. Համաձայն սույն ընթացակարգի հրավերի 8.7 կետի նիստը կասեցնել՝ <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին հրավիրել վերոնշյալ չափանաբաժիններով գների նվազեցման շուրջ բանակցությունների 14.03.2018թ. ժամը 12.00-ին <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ:
2. Մերժել <<Արվատեկ>> ՍՊԸ հայտը:
3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 14.03.2018թ. ժամը 12.00 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Ս. Սիսակյան	Հանձնաժողովի նախագահ
Հ. Մինասայան	Հանձնաժողովի անդամ
Վ. Ալթունյան	Հանձնաժողովի անդամ
Հ. Սահակյան	Հանձնաժողովի անդամ
Հ. Նիկողոսյան	Հանձնաժողովի անդամ
Ա. Կարապետյան	Հանձնաժողովի քարտուղար